

Բարոյական նորմերի ձևավորման խնդիրը տարրական դասարաններում

*Մակարյան Ալվարդ
Բաղդասարյան Լիլիթ*

Հանգուցային բառեր. բարոյական դաստիարակություն, կրտսեր դպրոցական տարիք, դասագրքեր, ընթերցանություն, գեղարվեստական ստեղծագործություններ, գիտելիքի հաղորդում, բարոյական արժեքներ, բարոյական արժեհամակարգ

Ուսումնառության տարիներին և առանձին դասընթացների յուրացման գործընթացում ուսուցիչները, բացի գիտելիքներ հաղորդելուց, նպատակ են հետապնդում իրականացնել դաստիարակության գործում դժվարին, բարդ և երկարատև աշխատանք, որի մեջ իր առաջնակարգ և կարևոր տեղն ունի բարոյական նորմերի ձևավորումը: Անշուշտ, վերջիններիս ծլարձակման ուղղությամբ պետք է աշխատանք կատարել ընտանիքում երեխայի վաղ մանկության տարիքից և աստիճանաբար զարգացնել մանկապարտեզում: Մակայն ավելի ընդգրկուն և հետևողական աշխատանք իրականացվում է հիմնականում տարրական դասարաններում տարատեսակ դասերին և հատկապես մայրենի դասագրքերում ընդգրկված նյութերի միջոցով՝ նախկին ծլարձակած սերմերը ամրակայելու, արմատներ ու ընձյուղներ դարձնելու նպատակով: Հետևաբար, տարրական դասարաններում ուսուցչի նպատակներից մեկն էլ, հատկապես «Մայրենիի» դասերին, բարոյական նորմերի դաստիարակությունն է, որովհետև գեղարվեստական ստեղծագործությունների հերոսներն իրենց լավ կամ վատ արարքներով մոգական հզոր ազդակ են աշակերտների բարոյական նորմերի ձևավորման համար:

Մանկավարժության մեջ ընդունված է բարոյականության դաստիարակության բովանդակության հետևյալ բաղադրամասերը՝ վերաբերմունք իր պետության քաղաքականության, հայրենիքի, ուրիշ երկրների, հարազատ և այլ ժողովուրդների, բնության, աշխատանքի, հասարակական ունեցվածքի, մարդկանց և իր նկատմամբ, ինչպես նաև ուրիշ այլ որակներ: Ինչպես նշել է Ս. Մանուկյանը. «Վերջիններս իրականացվում են դաստիարակության հատկապես հետևյալ մեխանիզմի միջոցով՝ ճանաչում-գնահատում-վերաբերմունք» [4, 71]: Անշուշտ վերաբերմունքի ձևավորումն իրականացվում է դասերին, դասերից դուրս կազմակերպվող սովորողների գործունեությամբ՝ դաստիարակության բոլոր մեթոդների և միջոցների կիրառմամբ:

Տարրական դասարաններում բարոյական դաստիարակության խնդիրն է ձևավորել աշակերտի բարոյական գիտակցությունը և վարքը՝ առանձնացնելով ու կարևորելով հայրենասիրության, մարդասիրության, գթասրտության, բարի արարքի դրսևորման որակները: Կարևոր է իմանալ, թե կրտսեր տարիքում բարոյական ինչ որակներ, նորմեր ձևավորել երեխաների մեջ: Ուստի պետք է գտնել

յուրաքանչյուրի բարոյական առանցքը, հիմքը, որովհետև ինչպես նշել է կուբացի Խոսե Մարտին. «Ամենադժվար մասնագիտությունը բարոյական մարդ լինելն է»: Վերջնահաշվում՝ ցանկացած ծնողի ու մանկավարժի նպատակը բարոյական մարդ և բարոյական հասարակություն ունենալն է:

Պատահական չէ, որ մեծ փիլիսոփա Մենեկան նշել է *«Սովորիր բարի բարքեր, նոր միայն իմաստություն»:*

Բարոյական դաստիարակության գործընթացում կարևոր է տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Կրտսեր տարիքում բարոյական դաստիարակությունը հիմնվում է միջանձնային, մարդասիրական փոխհարաբերությունների ձևավորման վրա: «Այս տարիքում երեխայի համար պետք է առաջնային նշանակություն ունենան հաղորդակցումը, ջերմ հարաբերությունները» [1, 81]: Չպետք է մոռանալ, որ անձնավորության բարոյական ոլորտին պատկանող դրական և բացասական որակները ձևավորվում են հիմնականում կյանքի կենսականորեն անհրաժեշտ կարիքների թելադրանքով (երեխան քաղցած է կամ հիվանդ, գողություն է անում, որ կարիքներ բավարարի): Սակայն հուզաթաթախ ու համոզիչ կերպարներով հերոսներն ավելի հեշտությամբ են թափանցում տարրական դասարանների աշակերտների անաղարտ հոգիները՝ սերմանելով նրանց մեջ բարոյական վարքի դրական նորմեր:

Վերոնշյալ խնդիրներից ելնելով՝ մենք մեր առաջ խնդիր դրեցինք ուսումնասիրել տարրական դասարանների գործող «Մայրենի» դասագրքերն ըստ գեղարվեստական նյութերի՝ տարբերակելով, թե բարոյական վարքագծի ձևավորման հարցը որքանով է ընդգրկված, և ինչպիսի նորմեր են ուսուցանվում աշակերտներին: Չորրորդ դասարանում ուսուցանվում է Կ. Թորոսյանի, Վ. Սարգսյանի, Հ. Խաչատրյանի, Կ. Չիբուխյանի «Մայրենի» դասագրքով կամ էլ Դ. Գյուլջիսյանի, Ն. Հեքեքյանի «Մայրենի»-ով:

Անդրադառնանք վերը նշված առաջին դասագրքի հեղինակների ներկայացրած ընթերցանության նյութերից մի քանիսին, որոնցում շոշափվում են սիրո (մոր, ընկերոջ, հայրենիքի նկատմամբ), աշխատասիրության, ազնվության, իրար հարգելու, օգնելու մասին բարոյական նորմեր: Ընթերցարաններում ընդգրկված նյութերն, անշուշտ, նպատակամետ են և դրականորեն կարող են անդրադառնալ երեխաների վարքագծի բարոյական նորմերի ձևավորման վրա, եթե դրանք ուսումնասիրվեն ոչ միայն գիտելիքներ հաղորդելու նպատակով, այլև շեշտադրվի նաև բարոյական նորմերի յուրացման կարևորությունը:

Վերոնշյալ ստեղծագործությունների վերջում առաջադրվում են հարցեր և հանձնարարականներ, որոնց պետք է անդրադառնան աշակերտները՝ բառապաշարի հարստացման, նյութի վերապատման կամ արտահայտիչ ընթերցանության, կապակցված խոսքի զարգացման նպատակով, իսկ բարոյական վարքագծի նորմերը քննարկվում են շատ հպանցիկ՝ դասանյութի վերջում առաջադրված մեկ կամ երկու հարցերի միջոցով: Լավագույն դեպքում ստեղծագործություններն

ավարտվում են մեծերի ասույթներով կամ բարոյախրատական խորհուրդներով:

Ահավասիկ՝ Ա. Վարդանյանի «Օջախի հիմքը» ստեղծագործությունը վերաբերում է երեք սրբերին (սեր, հաջողություն, հարստություն), որոնցից մեկը պետք է հյուրասիրվողի կողմից տուն մտնի: Ուրեմն՝ տնեցիները պետք է որոշեն, թե որ մեկին առաջնություն տան: Սկեսուրը, սկեսրայրը և հարսը որոշում են տուն հրավիրել «սիրուն»: Երբ հրավիրում են վերջինիս, նրա հետ տուն են գալիս նաև մյուս երկուսը՝ հաջողությունը և հարստությունը: Որպես նյութի ընդհանրացում գրված է.

«Այսպիսով, պատմվածքը սովորեցնում է, որ ընտանիքի հիմքը...

Քո դասարանն էլ մի մեծ ընտանիք է, ուրեմն...» [3, 53]:

Թե ի՞նչ է նշանակում «ընտանիքի հիմք» և ի՞նչ կապ ունի սերն ընտանիքի հիմքի հետ՝ աշակերտների համար մնաց անհասանելի՝ որպես բարոյական նորմ, առավել ևս այն տեսակետը, որ «դասարանն էլ մի մեծ ընտանիք է, ուրեմն ...»: Դիմենք մեկ այլ նյութի՝ Հ. Շիրազ «Մայրս»: Այս ոտանավորում հեղինակը մորը համեմատում է մատուռի, ամրոցի, արծվաբնի և այլ իրերի ու առարկաների հետ և վերջում ընդհանրացնում.

«Մեր տան Աստվածն է մայրս»:

Այն է՝ այնքան ազնիվ, սուրբ, անարատ, բարի ու գթասիրտ է մայրը, որ համեմատում է Աստծո հետ: Սակայն դասանյութի վերջում, որպես ընդհանրացում, ընդգծված ձևով գրված է.

«Մայրերի ավի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը» (Գարեգին Նժդեհ):

Հետաքրքիր է վերոնշյալ ասույթից՝ ի՞նչ կարող է հասկանալ և եզրակացություն անել տասը տարեկան աշակերտը: Բնականաբար, նա պետք է վերարտադրի մեխանիկորեն այն, ինչը կլսի ուսուցչի շուրթերից, թե ինչ ստել է «ազգերի ճակատագիր» և «մայրերի ավերի մեջ փնտրել այն» երեխայի համար մնում է անհասկանալի:

Կամ Լ. Սարգսյանի «Հայոց ուսուցիչ» բանաստեղծության մեջ աշակերտի շուրթերից փառաբանության խոսքեր են հնչում առ ուսուցիչը, ով իր սաների համար «հոգու հերկերի անմահ սերմացան է»: Եվ որպես բնաբան ընտրված է հետևյալ քառատողը.

«Միրենք մեր հողը

Միրենք լեզվի նման մայրենի,

Հիշենք՝ դրախտն իսկական

Տու՛ն-օջախն հայրենի» [3, 65]:

Գրքաստեղծ հեղինակները նյութն ամփոփել են հետևյալ նախադասությամբ. «Դու իմացա՞ր, որ քո մեջ մի կայծ վառելու համար ուսուցիչն իր մեջ լույսի մի ամբողջ ծով է կուտակում»: Շարադրվածից բնականաբար ակնհայտ է դառնում, որ ուսուցիչը միայն «լույսի կայծեր է վառում» էլ ինչ բարոյական նորմերի կամ ինչ

դաստիարակության մասին է խոսքը:

Ինչպես ասում են օրինակներն ավելի խոսուն են, և դիմենք վերջիններին: Հ. Սահյանի «Գետը» ստեղծագործությունը վերաբերում է բարի գործ կատարելուն (պաղ ջուր է տալիս մարդուն, բույսին, կայաններին կյանքի կոչում, կրծքին նավեր պահում և այլն) և որպես ամփոփում գրված է. «Հիշու՛մ ես՝ Սևանի մեջ թափվում է 28 գետ ու գետակ: Ծովին խառնվող գետի նման դու էլ պիտանի եղիր քո հայրենիքին» [3, 75]:

Կամ Ա. Խնկոյանի՝ մեզ բուրբիս քաջածանոթ «Ճպուռն ու մրջյունը» ստեղծագործությունն ավարտվում ու ընդհանրացվում է հետևյալ ասույթներով.

«Ով աշխատի, նա կուտի:

Ով ավարի, ոչ դավարի

Ով՝ մրջյուն, ով՝ ճպուռ, ընտրիր ինքդ» [3, 91]:

Վ. Այգեկցու «Այրի կինն ու որդին» ստեղծագործությունն ընդհանրացվում է հետևյալ տողերի միջոցով.

«...եթե փորձես դու խաբել ուրիշին,

Լոկ քեզ կխաբես, մշտապես հիշի՛ր» [3, 97]:

Ներկայացնենք Ռ. Հայրապետյանի «Շախմատ» բանաստեղծությունը, որի հիմնական իմաստը փղերի՝ ոչ միասնական պայքարելու պատճառով պարտվելն է, և ստեղծագործությունը ավարտվում է հետևյալ տողերով.

«Իսկ որտեղ որ կա սեր ու միություն

Այնտեղ չի լինի երբեք պարտություն»:

Որպես ընդհանրացում՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» [3, 101] Ե. Չարենց: Որքանով է հարիր տասը տարեկան երեխային ներկայացնել մեծ բանաստեղծի խորիմաստ պատգամը:

Չորրորդ դասարանի երեխային մեր բարոյախրատական խորհուրդներով արդյոք չէ՞նք դարձնում «երեխա-ծերուկ»:

Օրինակները շատ են, բավարարվենք այսքանով և մտածենք այն կարևոր խնդրի մասին, թե ի՞նչ կարող է տալ երեխային տվյալ ստեղծագործությունը, այլ ոչ թե ի՞նչ ենք մենք մտածում տվյալ ստեղծագործության մասին:

4-րդ դասարանի մյուս «Մայրենի» (հեղինակներ՝ Դավիթ Գյուրջինյան, Նարինե Չեքեքյան) դասագրքից որպես բարոյական որակների դաստիարակությանը վերաբերող նյութեր առանձնացրել ենք մի շարք ստեղծագործություններ:

Առաջանցման ձևով նշենք, որ այս գրքում հիմնականում կարևորվում է բառապաշարի հարստացումը («բառերի գանձատուփ»), քերականական նյութի ուսուցումը կամ կրկնությունը, կապակցված խոսքի զարգացումը, երբեմն-երբեմն անդրադարձ կա նաև դաստիարակությանը:

Այսպես՝ «Լավ ընկերը» նյութն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Ընկերը նա է, ով քո սիրո և օգնության կարիքն ունի, ընկերը նա է, ով սիրում և օգնում է քեզ» [2, 8]:

Ստեղծագործության հիմնական միտքը ցայտուն ձևով ընդգծված է հետևյալ նախադասության մեջ, այն է՝ ընկերոջ ծանր, վատ պահին սաստար կանգնելը, օգնելը: Անշուշտ ստեղծագործությունը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն ավելի շատ խոսեն բարին կատարելու, մարդուն, ընկերոջն օգնելու մասին, մինչդեռ նյութին վերաբերող հարցերը հիմնականում նպատակաուղղված են գիտելիքներ հաղորդելու և յուրացումը ստուգելու խնդրին:

Համեմատաբար ինչ-որ չափով բարոյական դաստիարակության հարցեր են շոշափվում Ս. Կապուտիկյանի «Տղայիս» բանաստեղծության մեջ:

Բանաստեղծուհին ընդգծում է՝ կոչով դիմելով տղային.

«Դու չես սովորում գերազանց, տղա՛ս...

Տեսնում եմ անշուշտ... բայց երբ խնամքով

Ծածկում ես թախտին ննջած տատիկին,

Երբ տան մրգերից բաժին ես տանում

Մեր դռնապանի փոքրիկ տղային,

Բակում կովելիս պաշտպան ես կանգնում

Ուժեղի ձեռքից տուժած սկարին,

Տեսնում եմ խորքից... »:

Տղան բարի և ազնիվ է, հոգատար ու առատաձեռն: Ստեղծագործության մեջ կարևորը *մարդ* մնալու խնդիրն է և ոչ թե դասագրքում գետեղված նյութերը մեխանիկորեն սերտելը: Պատահական չէ, որ հեղինակը ստեղծագործությունը ավարտում է.

«Մարդուն ջերմացրու քո լույսով մաքուր,

Մա՛րդ եղիր, որդի՛ս, մարդ մնա կյանքում» [2, 23] տողերով:

Բարոյական նորմերի դաստիարակության մի կոթող է վերոնշյալ ստեղծագործությունը, որտեղ ինչպես ընդգծում, շեշտադրում է հեղինակը, երեխայի մանկության տարիներից սկսած՝ նրա մեջ պետք է ձևավորել թույլին, սկարին օգնելը, մեծերի նկատմամբ հոգատար լինելը և վերջնահաշվում՝ «Մարդ լինելու ու կյանքում մարդ մնալու» պատգամն է: Վերոնշյալ ստեղծագործության ուսուցման համար առաջնային պլան են մղվել «բառերի գանձատուփ և հարցերի ու առաջադրանքների արկղիկ» հանձնարարականներ, որից հետո վերջում՝ «Բնչպիսի՞ն կուզեմ լինել» վերնագրով շարադրություն գրել և «պատմել ճանաչված ազնիվ մարդկանցից մեկի մասին» առաջադրանքները: Հանձնարարականները նպատակային չեն կամ էլ չեն բխում աշակերտների հոգուց:

Հ. Մահյանի «Գետը» բանաստեղծությունն է նաև ընդգրկված այս դասագրքում, և հեղինակը ստեղծագործությունն ավարտում է այսպես.

«Դու էլ գետի պես անցի՛ր քո ճամփան,

Եվ նման եղիր գետի հորձանքին,

Որ կյանքիդ վերջին կայանում անգամ

Բնչ-որ մի բանով պետք լինես կյանքին» [2, 130]:

Քառատողի մեջ խորը, բազմիմաստ և ծավալուն անդրադարձ կա բարոյական նորմերին, մինչդեռ բացի բառային և տեքստային ծավալուն առաջադրանքներից որպես ընդհանրացում՝ պահանջվում է. «Նկարագրել գետը տարվա տարբեր եղանակներին և հեքիաթ հորինել ծովի կյանքի մասին»:

Այսպիսի օրինակները բազմաթիվ են և մենք կարող ենք ծավալվել, սակայն նպատակահարմար չենք համարում շարադրել միայն այս հոդվածի շրջանակում: Ամփոփելով եզրակացնում ենք, որ.

1. ընթերցանության նյութին վերաբերող հանձնարարականները մասամբ, կամ էլ բոլորովին չեն նպաստում բարոյական նորմերի ու որակների ձևավորմանը,
2. քննարկվող հարցերը չեն բխում երեխաների բարոյական պատկերացումներից և նրանց տարիքային հնարավորություններից:

Այսպիսով, տարրական դասարաններում «Մայրենի» դասագրքերում ընդգրկված գեղարվեստական ստեղծագործությունների քննարկումը գրեթե չի առնչվում բարոյական նորմերի ձևավորման խնդիրների հետ, ինչը, անշուշտ, նեղացնում է դասընթացի ազդեցության ոլորտը և կրթությունը դառնում է թերի, քանի որ անտեսվում է բարոյական արժեհամակարգի ձևավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ասատրյան Լ. Թ., Հակոբյան Դ. Հ., Ասատրյան Մ. Մ., Գևորգյան Մ. Մ., Կարապետյան Ն. Ջ., Բաղդասարյան Ա. Ա.*, Մանկավարժություն, Արտագերս, 2017:
2. *Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.*, «Մայրենի» 4-րդ դասարանի դասագիրք:
3. *Թորոսյան Կ., Մարգարյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխյան Կ.*, «Մայրենի» 4-րդ դասարանի դասագիրք:
4. *Մանուկյան Ս.*, Ընդհանուր մանկավարժագիտություն, Երևան 2005, 71 էջ:

Проблема формирования нравственных норм в начальных классах

*Макарян Алвард
Багдасарян Лилит*

Резюме

Ключевые слова: нравственное воспитание, младший школьный возраст, учебники, чтение, художественные произведения, передача знаний, нравственные ценности, система нравственных ценностей

В статье обсуждается неполноценность вопросов и задач материалов, включенных в учебники для начальных классов «Родной язык», в проблеме формирования нравственных норм. Детализируя в изложении материалы и задачи учебников «Родной язык» для 4-го класса, мы подчеркиваем те пробелы, которые нашли свое место в разделе «Задачи». Вопросы и задачи материалов, включенные в учебники, почти не исходят из самой сути материала. В некоторых учебниках основное внимание уделяется лингвистическому аналитическому аспекту данного материала, а воспитание отодвигается на задний план, или авторы книги иногда и вовсе не возвращаются к этой проблеме. Между тем, связь между образованием и воспитанием в начальных классах должна быть тесной и выраженной в задачах учебника. Учебники для начальных классов с художественными материалами являются теми мощными способами, которые помимо образовательного процесса также должны обеспечивать нравственное воспитание, формируя нравственное сознание.

Формирование нравственных норм в начальной школе посредством художественных произведений является одним из важнейших проблем всестороннего и гармоничного развития личности. Одним из заметных пробелов школьного образования сегодня является неполноценное осмысление и усваивание нравственных ценностей и норм, неполноценная реализация нравственного воспитания. В школах необходимо акцентировать формирование нравственного сознания личности, развитие мышления, а не только присвоение знаний и механическое воспроизведение.

The Issue of Developing Moral Norms in Primary Grades

*Makaryan Alvard
Baghdasaryan Lilit*

Summary

Key words: *moral education, primary school age (early school age), textbooks, reading, artistic works, knowledge transfer, moral values, system of moral values*

The article discusses the inferiority of the questions and assignments of the textbooks of primary schools, called "Mother tongue", in the issue of developing moral norms. We emphasize the omissions found in the section "Tasks" by presenting the materials and assignments of textbooks, called "Mother tongue" for the 4th grade in detail. Questions and assignments of the textbooks do not always proceed from the very essence of the material. Some textbooks focus on the linguistic and analytical aspect of the given material, and upbringing is relegated to the background, or the authors of the book sometimes do not even return to this problem. Meanwhile, the connection between education and upbringing in primary school should be close and expressed in the assignments of textbooks. Primary school textbooks with artistic works are powerful means that besides the educational process, should also ensure moral education, by forming moral consciousness.

Developing moral norms in primary school through artistic works is one of the most important issues of individual's comprehensive and harmonious development. Today, one of the noticeable omissions of school education is incomplete understanding and assimilation of moral values and norms and incomplete realization of moral education. In schools, it is vital to emphasize the formation of moral consciousness and thinking of the individual, and not just acquisition of knowledge and mechanical reproduction.